

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» կրթական ծրագրի ուսումնառությունը բակալավրիատում չորս տարի է, որի ավարտին շրջանավարտը ստանում է ԲԱԿԱԼԱՎՐԻ կրթական աստիճան և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ: Կրթական ծրագիրն իրականացվում է առկա ուսուցմամբ:

ԵՂՀ-ի «Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը» և Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնն աշխատանքներ կտանեն օգնելու «Սոցիալական մանկավարժություն» բաժնի շրջանավարտներին հանրակրթական դպրոցներում աշխատանքի տեղավորման հարցում:

ԵՂՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը ողջունում է հանրակրթական դպրոցների բոլոր այն շրջանավարտներին, ովքեր կցանկանան սովորել ԵՂՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրում:

«Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ընդունելության համար հարկավոր է հանձնել.

Սոցիալական մանկավարժություն	մրցությանին		Ոչ մրցությանին
	Հլ(գ)	Օտլ(գ)**	Ս(գ)*

* Հաշվի է առնվում դպրոցի ավարտական քննության կամ տարեկան գնահատականը

** Վճարովի համակարգում թափուր տեղերի առկայության դեպքում հաշվի է առնվում դպրոցի ավարտական քննության կամ տարեկան գնահատականը:

ԲԱՐԻ ԳԱՆՈՒՄՏ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԱՄՑԵ՝ ք. Երևան, փ. Աբովյան, 52/ա

ՀԵՌ՝ 060/710 616

ԷԼ. ՓՈՍՏ pedagogy@ysu.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ



Երևանի պետական համալսարանի Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի բակալավրիատում 2010թ.-ից հաջողությամբ գործում է «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագիրը:

Ծրագրի նպատակն է Հայաստանի հանրակրթական դպրոցների համար պատրաստել սոցիալական մանկավարժներ, ովքեր կնպաստեն հանրակրթության ոլորտում երեխաների սոցիալական, հաղորդակցական, հոգեբանամանկավարժական տարաբնույթ խնդիրների և սահմանափակ կարողություններով երեխաների ներառական ուսուցման հիմնահարցի լուծմանը՝ էլնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից և տեխնոլոգիաներից:



Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության հիմնախնդիրները, մեկնաբանել սոցիալական միջավայրի դաստիարակչական մեծ ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց զարգացման գործընթացի վրա սոցիալականացման համատեքստում:



Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժն իրականացնում է հետևյալ գործառույթները. նա ուսումնասիրում, հետազոտում, ախտորոշում է հիմնախնդիրը, այն լուծելու համար օգնում, աջակցում, ուղղորդում, վերադաստիարակում, խորհրդատվություն և

վերականգնողական ինչպես նաև՝ հոգեբանամանկավարժական աշխատանքներ է իրականացնում:

Սրանք կատարվում են տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով: Սոցիալական մանկավարժի գործունեության մասնագիտական խնդիրն է օգնել սոցիալականացման և հասարակություն ներառվելու գործընթացում աջակցության կարիք ունեցող երեխաներին:



Հայաստանի հանրակրթական դպրոցներում սոցիալական մանկավարժի անհրաժեշտությունն ու կարևորությունն ամրագրված են ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում: Սոցիալական մանկավարժը կամուրջ է հանդիսանում հասարակության տարբեր սոցիալական ինստիտուտների միջև: